127. ***Ձագավանը*** Կոտայքի շրջանի բնակավայրերից է. այժմ այն չկա: Նրա տարածքը գրավել է Բալահովիտ գյուղը դեպի հարավ տարածվելով: Այդտեղից արևմուտք դեպի Երևան հոսող Գետառի ափին է Ձագավանքը, որ այժմ անվանվում է Գետարգել: Գետարգելը գարնանը զատկից հետո մեծ ուխտատեղի է:

128. ***Մուշաղբյուր*** Ալիշանը կոչում է նաև Մուշեղաղբյուր: Արտաշատի, Վեդիի և Ակոռի գյուղերը համարվել են այդ գյուղի Սուրբ Աստվածածնի թեմը: Գյուղի տեղավայրը անհայտ է, կործանվել է Երևանի մեծ երկրաշարժի ժամանակ՝ 1679 թվին:

129. ***Ղանդահարը*** Աֆղանստանի քաղաքներից է:

130. ***Ֆրանկանոց գյուղը*** Ալիշանը տեղադրում է Մեծամորի և Քասաղ գետերի գետամիջում՝ Էջմիածնի շրջանում:

131. ***Նիկոմիդա քաղաքը*** Իզմիթն է Մարմարա ծովի ափին:

132. ***Գառնակերի վանքը*** գտնվում է Արցախի Փառիսոս (Փառեն) գավառում:

133. ***Ծաղկաձորի գավառը*** ներկայիս Հրազդանի շրջանն է Ծաղկաձոր չքնաղ կենտրոնով, որտեղ գտնվում է Կեչառիսի վանքային համալիրը:

134. ***Նախամարք գյուղը*** Ծաղկաձորի շրջանում է եղել, որ հնում կոչվել է Վարաժնունիք: Ըստ Ալիշանի՝ Նախամարքի տեղը հայտնի չէ:

135. ***Կեչառիսը*** գյուղ է եղել, որ այժմ գոյություն չունի: Գտնվել է Ծաղկաձորի հարևանությամբ: Գուցե թե հենց Ծաղկաձորի հին անունն է, քանի որ Ծաղկաձորի հյուսիս-արևելյան ծայրին է գտնվում Կեչառիս վանքային համալիրը:

136. ***Սաղմոսավանը*** գյուղ է Աշտարակի շրջանում՝ Աշտարակից 12 կմ հյուսիս Քասաղ գետի ափին: Գյուղին մոտիկ և գյուղից առաջ 13-րդ դարում բարձր ժայռի վրա կառուցվել է վանքային համալիր Սաղմոսավանք անունով:

137. ***Շատիկը*** վանք է Եղեգնաձորի շրջանի Շատին գյուղի մոտերքը: Վանքը հիմնադրվել է 929 թվին:

138. ***Աղստևի գավառ*** հասկացությունը 10-րդ դարում հիշատակում է Ասողիկը: Հավանորեն Աղստև գետի հովտի մասին է խոսքը:

139. ***Վեղու դաշտը*** Արարատյան դաշտի արևելյան մասն է՝ Վեղու տարածքը:

140. ***Հարանց վարքը*** գրքի անվանում է, որտեղ հավաքված են սրբակենցաղ մարդկանց, հոգևոր նշանավոր հայրերի, խոշոր եկեղեցական գործիչների, մարտիրոսների կյանքի ու գործունեության պատմությունները: Հայկական ***Հարանց վարքերը*** բազմաթիվ ժողովածուների ամբողջություն է:

141. ***Գողթան գավառը*** հնում Սյունյաց նահանգի գավառներից մեկն

էր: Հարավից հարում է Արաքսին, հյուսիսից՝ Ծղուկին ու Երնջակին, արևելքից՝ Արևիքին ու Ձորքին, արևմուտքից՝ Երնջակին:

142. ***Մեծամորը***, որ ժողովուրդը Սև ջուր է կոչում, սկիզբ է առնում Արարատյան դաշտի Արմավիրի շրջանի Ակնա լճից և գնում, թափվում է Արաքսը:

143. ***Թեղենիսը*** վանքային համալիր է Ապարանի (Նիգ) գավառի Բուժական գյուղի հյուսիսում:

144. ***Սևավեր գյուղը*** ըստ Ալիշանի տեղադրված է Քարաշամբի մոտերքը: Հավանորեն այնտեղ է եղել նաև Սանտոն, Արայի լեռան և Հրազդանի միջև:

145. ***Բաղռինջը*** ըստ Ալիշանի՝ Բյուրականից հարավ երկու մղոն հեռու գտնվող Ագարակն է:

146. ***Տիգրանակերտը*** Մեծ Հայքի Աղձնիք նահանգի Եփրկերտ գավառում է: Կոչվել է նաև Մարտիրոսոպոլիս, Եփրկերտ, Ֆարկին: Կառուցել է Տիգրան Մեծը մ.թ.ա. 70-ական թվերին: Պատմության մեջ Տիգրանակերտը շփոթվել է Դիարբեքիրի՝ Ամիդի հետ: Այստեղ էլ կրկնվում է այդ սխալը:

147. ***Կավակերտը*** ըստ Ալիշանի՝ Դաստակերտ էր կամ գյուղ Հրազդանի ափին: Տեղը հայտնի չէ:

148. ***Ջահուկ*** կամ ***Ճահուկ*** Մեծ Հայքի Սյունյաց նահանգի գավառներից է, որը մի գյուղի անունն է եղել նաև:

149. ***Գուլավտի,*** Գուլոստի Ապարանի (Նիգ) գավառի Ձորաբերան գյուղի հին անվանումն է:

150, 151. Մեծ Հայքի Գուգարք նահանգի ***Տաշիրի գավառի*** նշանավոր բնակավայրերն են ***Դսեղը, Օձունը, Սանահինը*** և այլ պատմական հնություններով ու վանքերով հարուստ վայրեր:

152. ***Բարկուշատը*** Սյունիքի Բաղք գավառի գյուղերից է եղել:

153. ***Կոտայք գավառի*** հիշված ***աղբյուրները*** հիմնականում սկիզբ են առնում Ակունք և Աղաձոր գյուղերի արևմտյան տների տակից: Արմաղան լեռնաշղթայի փեշերից, մի ժամանակ այդ ջրերից էր գոյանում Երևանի միջով անցնող Գետառ գետը: Այժմ այդ ջրերը քիչ բացառությամբ խողովակաշարերով բերված են Երևան:

154. ***Աղջոց վանքը*** Գեղարդավանքից հարավ 7 կմ հեռավորությամբ վանք է: Գտնվում է հին Մազուզ գավառում (այժմ Կոտայքի շրջան):

155. ***Այրիվանքը*** Գեղարդավանքի հին անվանումն է: Գտնվում է Մեծ Հայքի Արարատ նահանգի Մազուզ (Գառնի) գավառում Գառնի նշանավոր գյուղից 7 կմ հյուսիս-արևելք: Նշանավոր ուխտատեղի է առ այսօր:

156. ***Հավուց թառը*** գտնվում է Գառնի գյուղից արևելք Ազատ գետի ձախ ափի բարձունքի վրա: Կառուցվել է 1013 թվականին: Ծաղկման շրջան է ապրել 12-14-րդ դարերում: Կործանվել է 1679 թվի երկրաշարժից: